ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍՈՒՄ ԹՅՈՒՐՔԱԼԵԶՈՒ ԳՐԱՎՈՐ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ XIX Դ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

ԳԱԼՍՏՅԱՆ Վ. Ա.

XIX դարի սկզբին Արևելյան Այսրկովկասի պատմության մեջ տեղի ունեցան շրջադարձային իրադարձություններ: 1804-1813 թթ. երկրամասի տարածքը կազմող և Իրանից կիսանկախ քաղաքական կարգավիճակում գտնվող Դերբենդի, Ղուբայի, Բաքվի, Շամախիի, Շաքիի խանությունները խաղաղ համաձայնության կամ ռազմական գործողությունների հետևանքով մտան Ռուսական կայսրության կազմի մեջ[1]:

Ռուսական տիրապետության տակ անցնելուց հետո Արևելյան Այսրկովկասն աշխարհագրորեն կտրվեց իր համար ավանդական դարձած իրանական քաղաքական, մշակութային և սոցիալ-տնտեսական միջավայրից: Սակայն դարերով արմատացած իրանական՝ առաջին հերթին մշակութային ազդեցությունը շարունակում էր մնալ որպես երկրամասի մահմեդական բնակչության և վերնախա- վի վրա ազդող հզոր գործոն: Բավական է նշել միայն, որ դարեր շարունակ Իրանի տիրապետության ներքո գտնված Արևելյան Այսրկովկասում պետական գրագրության և գրականության լեզուն պարսկերենն էր: Թյուրքերենի տեղական տարբերակով ստեղծվել էին միայն բանահյուսություն և պոեզիայի սակավաթիվ գրավոր օրինակներ: Ռուսական տիրապետության հաստատումից հետո էլ պարսկերենի դիրքերը տեղի մահմեդական գրագետ բնակչության շրջանում մնում էին գերակայող:

Արևելյան Այսրկովկասը ոչ միայն աշխարհագրորեն, այլև մշակութային և քաղաքական տեսանկյունից Իրանից և իրանական միջավայրի ազդեցությունից կտրելու նպատակով Կովկասի ռուսական իշխանությունը դիմեց հատուկ քայլերի: Իրանական ազդեցության ամենացայտուն դրսևորումը պարսկերենն էր, որը ռուսական տիրապետության հաստատման առաջին տարիներին էլ կիրառվում էր գրագրության մեջ: Ուստի Ռուսաստանը թիրախ դարձրեց պարսկերենը: Պատահական չէ, որ Կովկասի կառավարումը ստանձնելուց անմիջապես հետո գեներալ Ա. Երմոլովը 1816 թ. կարգադրություն ուղարկեց «թաթարներով» բնակեցված բոլոր շրջաններ՝ պահանջելով թողնել պարսկերենը և գրել միայն «թաթարերեն»: Այնուհետև գրագրությունն ու

---

[1] Дубровин Н. Ф. *История войны и владычества русских на Кавказе, т. 4, СПб., 1886, с. 135-143; т. 5, СПб., 1887, с. 78-89;* Бакиханов А. *Гюлистан-Ирам, Баку, 1926, с. 156-162.*

նամակագրությունը սկսեց իրականացվել թյուրքերենով՝ տարբեր ուղղագրություններով[2]:

Ցարական ռազմավարչական համակարգի դրդմամբ և հովանավորությամբ աստիճանաբար ավելի լայնորեն սկսեց կիրառվել Արևելյան Այսրկովկասի մահմեդական բնակչության մեջ ամենատարածված լեզուն՝ խոսակցական թյուրքերենը: Փաստորեն, տեղի էր ունենում մշակութային լուրջ փոխակերպում՝ գրագրության և իշխող դասակարգի լեզու հանդիսացող պարսկերենը տեղը զիջում էր նոր ձևավորվող գրական թյուրքերենին: Այս գործընթացին աջակցում էր ցարական Ռուսաստանը[3]:

Արևելյան Այսրկովկասում թյուրքալեզու գրականության և գրական լեզվի հիմնադիրը ցարական պաշտոնյա, գրող և թարգմանիչ Միրզա Ֆաթալի Ախունդովն էր (1812-1878): Դասական կրոնական կրթությունից բացի, նաև ռուսական կրթություն ստացած Ախունդովն ստեղծագործական առումով կրում էր պարսկական մշակույթի ազդեցությունը, սակայն նրա քաղաքական հայացքները ձևավորվել էին ռուսական միջավայրի ներգործությամբ: Հենց նրա գործունեության շնորհիվ երկրամասում էականորեն թուլացավ իրանական ազդեցությունը, որը, անշուշտ, բխում էր Ռուսական կայսրության աշխարհաքաղաքական շահերից:

1850-1857 թթ. Ախունդովի գրած «Մոլլա Իբրահիմ Խալիլ, ալ-քիմիկոս, փիլիսոփայական քարի տիրակալ», «Բուսաբան Միսյե Ժորդանը և դերվիշ, հայտնի կախարդ Մսթալիշահը», «Ավազակին հաղթած արջը», «Լենքորանի խանության վեզիրը», «Ժլատի արկածները», «Արևելյան փաստաբանները» կատակերգական պիեսները, «Խաբված աստղերը» պատմվածքը համարվում են Այսրկովկասում թյուրքերենով գրված առաջին ամբողջական արձակ երկերը, որոնք միևնույն ժամանակ սկսեցին տպագրվել[4]: Դրանք նորություն էին նաև նրանով, որ գրված էին ոչ թե արևելյան, այլ եվրոպական ոճով[5]:

---

[2] Տե՛ս Ахундов М. Ф. *Докладная записка штабс-капитана Мирзы Фатали Ахундова (Избранные философские произведения, Баку, 1953, с. 342).*

[3] Հմմ. Варданян Т. *Азербайджанцы. История одного незаверш¸нного этнопроекта, М., 2012, с. 30;* Swietochowski T. *Russian Azerbaijan, 1905-1920: The Shaping of a National Identity in a Muslim Community, Cambridge, 1985, p. 27.*

[4] *История всемирной литературы в 9-и томах, т. 7, М., 1991, с. 216;* Мамедов Ш. *Мирза-Фатали Ахундов, М., 1978, с. 29.*

[5] Rubin D., Nagy P., Rouyer P. *The World Encyclopaedia of Contemporary Theatre: Europe, London-New York, 1994, p. 81; История всемирной литературы в 9-и томах, т. 7, М., 1991, с. 215;* Аух Е. М. *Между приспособлением и самоутверждением, Азербайджан и Россия: общества и государства, вып. 4, М., 2001; http://old.sakharov-center.ru/publications/azrus/az003.htm*

Մինչև Ախունդովի երկերը թյուրքալեզու կայացած գրականության բացակայության մասին են խոսում բարոն Նիկոլայիին ուղղված նրա նամակի հետևյալ տողերը. «Մինչև հիմա՝ XIX դարի կեսը, «թաթարական ցեղը» չունի սեփական գրականությունը: Հնարավոր չէ գտնել մի գիրք, որն իր բնագրով գրված լինի թաթարական ժողովրդական լեզվով: Եթե նույնիսկ գտնվի թաթարերենով գրված ինչ-որ բան, դա որևէ այլ լեզվից թարգմանություն է՝ պարսկերենից, արաբերենից կամ թուրքերենից հատուկ անբնական և ճոխացված արտահայտություններով»[6]:

Արևելյան Այսրկովկասում թյուրքերեն գրական լեզվի ամրապնդման տեսանկյունից կարևոր նշանակություն ունի նաև Միրզա Ֆաթալի Ախունդովի՝ արաբատառ գիրը բարեփոխելու նախաձեռնությունը: Նա առաջարկում էր Այսրկովկասի թյուրքերենի, նաև պարսկերենի և օսմանյան թուրքերենի համար կիրառվող արաբական այբուբենը հասարակ ժողովրդի համար դարձնել ավելի մատչելի: Ավելի ուշ նա հանգեց այն մտքին, որ արաբական այբուբենը պետք է ընդհանրապես փոխարինել լատինականով կամ ռուսականով: Ախունդովի նպատակն էր երկրամասի թյուրքախոս մտավորականության շրջանում մասսայականացնել գրական թյուրքերենը[7]:

Հարկ է հաշվի առնել XIX դարում առկա՝ արաբական այբուբենը փոխարինելու համընդհանուր միտումը, որը զգալի էր հատկապես Օսմանյան կայսրությունում: Հայտնի է, որ մինչև Առաջին աշխարհամարտը մի քանի փորձ է արվել օսմաներենի համար կիրառվող արաբական այբուբենը փոխարինել այլ լեզուների այբուբեններով: Գիտությանը հայտնի է հայատառ թուրքերենի ֆենոմենը, որով դարեր շարունակ արժեքավոր գեղարվեստական գործեր են ստեղծվել, թերթեր լույս տեսել: Հայոց այբուբենի հնչյունաբանությունը լիարժեքորեն համապատասխանում էր օսմաներենին, և, դրանով պայմանավորված, XIX դարի երկրորդ կեսին օսմանյան իշխանական շրջանակներում նույնիսկ ծրագրեր կային օսմաներենի արաբական այբուբենը փոխարինել հայկականով[8]: Ի դեպ, հայատառ թուրքերենի արդյունավետությունը ժամանակին գնահատել է նաև Ախունդովը: Նա նշում էր, որ հայերն ու հույները իրենց տառերով, սակայն թյուրքերենով տասից ավելի թերթեր են

---

[6] Ахундов М. Ф., *նշվ. աշխ., էջ 342:*

[7] Levend A. S. *Türk Dili'nde Gelişme ve Sadeleşme Evreleri, Ankara, 1972, s. 155.*

[8] Ստեփանյան Հ. *Հայատառ թուրքերենի դերը Օսմանյան կայսրության ժողովուրդների առաջընթացի մեջ (Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր, Ե., 2006, - 13, էջ 82):*

տպագրում. հետևաբար ինչո՞ւ օսմանյան կայսրությունը թույլ չի տալիս իրեն իր ստեղծած այբուբենով գրքեր և թերթեր տպագրել[9]:

Ախունդովի՝ լատինական և ռուսական այբուբենների հիման վրա ստեղծած «նոր մահմեդական այուբենի» վերջնական տարբերակը բաղկացած էր 32 ձայնավորից ու 10 բաղաձայնից[10]: Սակայն Իրանի և Օսմանյան կայսրության գիտական և իշխանական պահպանողական շրջանակները հրաժարվեցին ընդունել նոր այբուբենի նախագիծը: Ցարական Ռուսաստանն էլ չէր ցանկանում «մահմեդական» այբուբենի բարեփոխման կամ փոխարինման հարցում առաջ անցնել իսլամական աշխարհի երկու ամենաազդեցիկ պետություններից՝ Օսմանյան Թուրքիայից և Իրանից:

Ուշագրավ է, որ Ախունդովն իր կազմած լատինատառ այբուբենի մեջ էթնիկ հիմք չէր դնում և առաջին պլան չէր մղում թյուրքախոսների շրջանում դրա տարածումը: Պատահական չէ, որ նամակներում իր այբուբենը կոչում էր «նոր մահմեդական այբուբեն», իսկ Այսրկովկասի մահմեդականներին դիտարկում էր որպես մեկ ամբողջություն՝ տուրք տալով այդ շրջանում տարածված հավաքական ինքնագիտակցությանը՝ հիմնված կրոնական ընդհանրության վրա: Նա հաճախ օգտագործում էր «մահմեդական ազգ» եզրույթը՝ իրեն համարելով այդ «ազգի» ներկայացուցիչ[11]: Այս երևույթը փաստում է, որ XIX դարի 60-70-ական թթ. Արևելյան Այսրկովկասի թյուրքախոս հանրույթը որպես էթնոս կամ ազգ ձևավորված չէր, այլ մետաէթնոլեզվական հանրույթ էր՝ կրոնական ինքնագիտակցությամբ:

Արևելյան Այսրկովկասում թյուրքալեզու գրավոր մշակույթի հետագա արմատավորումը կապված է Հասան-բեկ Զարդաբիի (Մելիքով) (1842-1907) գործունեության հետ, որը հիմնադրել է Արևելյան Այսրկովկասում առաջին թյուրքալեզու «Էքինչի» (Հողագործ) թերթը:

Հասան-բեկ Զարդաբին անձնապես ճանաչել և նամակագրական կապի մեջ է եղել «Մշակ» թերթի հիմնադիր և խմբագիր Գրիգոր Արծրունու հետ[12]: 1875 թ. փետրվարի 27-ին լույս տեսած «Մշակ» թերթի 8-րդ համարի առաջին էջում

---

[9] Ахундов М. Ф. *Письмо Мирзе Юсиф-Хану от 8 июня 1871 года (Избранные философские произведения, Баку, 1953, с. 324).*

[10] Тагиев И. *Мирза Фатали Ахундов и новый тюркский алфавит (Культура и письменность Востока, кн. II, Баку, 1928, с. 58-59).*

[11] Ахундов М. Ф. *Письмо министру просвещения Ирана (Избранные философские произведения, Баку, 1953, с. 275-276).*

[12] Агаян Ц. К *вопросу об издании азербайджанской газеты «Экинчи» и связи «Экинчи» с армянской периодической печатью (Տեղեկագիր Հայկական ՍՍՌ ԳԱ, 1950, - 11, с. 58).*

հրապարակվել է «Էքինչիին» նվիրված հոդված՝ «Մի լրագիր թուրքերէն լեզուով»: Նշվում էր. «Կովկասյան թուրք ազգաբնակչությունը արգելք է հանդիսանում գյուղատնտեսության և հասարակական զարգացման համար: Ուստի ցանկություն կա, որպեսզի հայ և վրացի հասարակությունների համանմանությամբ թուրք հասարակության մեջ էլ ի հայտ գային ամբոխից բարձր և մտավոր կյանքով ապրող երիտասարդների խմբեր»[13]: Հայկական թերթում Հասան-բեկ Զարդաբին ներկայացվել է այս կերպ. «Մի բարձր ուսում ստացած երիտասարդ, Հասան-բէկ Մէլիքով, առաջինն է, որ յաղթելով բոլոր նախապաշարմունքները և ամեն տեսակ արգելքներ, հանդէս պիտի գայ՝ թուրքերէն լեզուով մի լրագիր հրատարակելով Բագուի մէջ: Մենք առանձին բաւականութեամբ մեր ընթերցողների ուշադրութիւնն ենք դարձնում այդ երևոյթի վրայ... Մի լուսաւորուած թուրք կամենում է, լուսաւորուած մնալով՝ թուրք մնալ... Ինչպէս ընթերցողը տեսնում է, սա մի բոլորովին նոր երևոյթ պէտք է լինի մեր մահմէտական ազգաբնակութեան կեանքի մէջ: Յուսանք, որ պ. Մէլիքովի յանձն առած գործը արժազանք կը գտնի նրա համադաւանների շրջանում, յուսանք, որ նրա լրագիրը առաջին քայլ կը լինի՝ մի անշարժ տարր եվրոպական ընդհանուր մարդկային լուսաւորութեան հետ ծանօթացնելու և նրա ուղղութեան հետ հաշտեցնելու համար»[14]:

Հասան-բեկի անձնական ծանոթությունը և մտերմությունը Գրիգոր Արծրունու հետ, նաև այն փաստը, որ առաջին թյուրքալեզու թերթի անունը ևս նշանակում էր «հողագործ» կամ «մշակ», մեզ թույլ է տալիս ենթադրել, որ Հասան-բեկ Զարդաբին ոգեշնչվել ու ազդվել է հայկական մամուլից և մասնավորապես «Մշակ» թերթից: Հայ մտավորականությունն իր հերթին հույսեր էր կապում Զարդաբիի և նրա հիմնած թերթի հետ՝ կարծելով, որ Այսրկովկասի թյուրքախոս էթնոլեզվական հանրույթը կդառնա ավելի քաղաքակիրթ, ինչն էլ դրականորեն կանդրադառնա նաև երկրամասի հայ բնակչության սոցիալ-տնտեսական կյանքի վրա:

Ի վերջո, 1875 թ. Հասան-բեկ Զարդաբին մեծ դժվարությամբ և հոդվածները մանրակրկիտ գրաքննության ենթարկելու պայմանով ստացել է ցարական իշխանության թույլտվությունը: Թերթի յուրաքանչյուր նոր համար ամեն անգամ Թիֆլիս գրաքննության չուղարկելու համար Հասան-բեկի խնդրանքով «Էքինչիի» գրաքննությունն ստանձնել և երաշխավորել է անձամբ Բաքվի նա-

[13] Մշակ, -8, Թիֆլիս, 1875:
[14] Նույն տեղում:

հանգապետ Ստարոսելսկին[15]: Այս պարագայում ևս տեսնում ենք, որ ցարական իշխանությունը խրախուսում էր թյուրքալեզու գրավոր մշակույթի տարածումը՝ որպես հակակշիռ Արևելյան Այսրկովկասում իր դիրքերն աստիճանաբար զիջող պարսկերենին: Պետք է հաշվի առնել, որ Կովկասի ցարական իշխանությունը թույլատրել էր «Էքինչի» թերթի հիմնումն այն պայմանով, որ դրանում չէին հրապարակվելու քաղաքական և հասարակական սուր բնույթի նորություններ: Գրաքննական մարմինների խստացված հսկողության պայմաններում թերթի էջերում հիմնական ուշադրությունը դարձվում էր մահմեդականների շրջանում կրթության տարածման, թյուրքերեն և ռուսերեն գրավոր լեզուների հանրայնացման քարոզչությանը:

«Էքինչի» թերթը փակվել է 1877 թ.: Մեզ հասած տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ թերթի փակման գործում վճռորոշ դեր է կատարել նույն թվականին սկսված ռուս-թուրքական պատերազմը: Թերթի հիմնադիր և խմբագիր Հասան-բեկ Զարդաբին իր հուշերում նշել է, որ ռուսական իշխանությունը ոստիկանության գործակալների միջոցով անընդհատ հետևում էր իրեն, իսկ ցարական գրաքննությունը շատ անգամ արգելում էր որոշ հոդվածների հրատարակումը[16]:

«Էքինչիի» 1877 թ. մի քանի համարներում զետեղվել էին Ռուսաստանին անհաճո լուրեր՝ ընթացող ռուս-թուրքական պատերազմի մասին, որոնք էլ կարևոր նշանակություն են ունեցել թերթի փակման համար[17]: Պետք է նաև հաշվի առնել, որ «Էքինչի» թերթը լույս էր տեսնում Այսրկովկասի թյուրքերենով, որն օսմաներենի նման արաբատառ էր, բառապաշարով մոտ այդ ժամանակ Օսմանյան կայսրությունում շրջանառվող լեզվին: Համարներում մեծ տեղ էր հատկացվում Օսմանյան կայսրության վերաբերյալ նյութերին: Տ. Սվենտոխովսկին իրավացիորեն կարծում է, որ «Էքինչի» թերթը համակրում էր Օսմանյան Թուրքիային և փաստացի Այսրկովկասի թյուրքախոսների շրջանում տարածում էր պրոօսմանյան տրամադրություններ, քարոզչական աշխատանք էր կատարում[18]: «Էքինչի» թերթի համարներն ուսումնասիրելիս ակնհայտ է, որ իսկապես դրանցում նշանակալի տեղ էր հատկացվում Օսմանյան կայսրությանը, այդ պետությունում տեղի ունեցող իրադարձություններին: Օսմանյան պետությունը բացահայտ չէր գովաբանվում, սակայն

---

[15] Агаян Ц., *նշվ. աշխ., էջ 57:*

[16] *Əkinçi, 1875-1877 (Tam mətni), Bakı, 2005, s. 16.*

[17] *Տե՛ս Əkinçi, № 17, 1877 – Əkinçi, 1875-1877 (Tam mətni), Bakı, 2005, s. 372.*

[18] Swietochowski T., *նշվ. աշխ., էջ 29:*

հաստատապես կարելի է պնդել, որ «Էքինչի» միջոցով Արևելյան Այսրկովկա-սի թյուրքախոսների շրջանում Օսմանյան կայսրությունը ներկայացվում էր որպես պատկառելի մահմեդական պետություն:

Այս փաստը, բնականաբար, հայտնի էր և անհանդուրժելի՝ ցարական իշխանությանը, հատկապես Օսմանյան կայսրության հետ 1877-1878 թթ. պատերազմի պայմաններում: Առաջին թյուրքալեզու թերթի էջերում լույս էին տեսնում նորություններ ոչ միայն ռազմաճակատում, այլև Այսրկովկասում կատարվող կարևոր իրադարձությունների վերաբերյալ: Հետևաբար ցարական կառավարությունը «Էքինչին» դիտարկում էր որպես տեղեկությունների ար-տահոսքի աղբյուր՝ պատերազմում Ռուսաստանի թշնամի Օսմանյան Թուրքիայի ռազմական և լրտեսական մարմինների համար: XX դարասկզբի քաղաքական գործիչ Մամեդ Էմին Ռասուլզադեն ևս «Էքինչի» թերթի փակման պատճառ էր նշում 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի առաջին տարում տպված մի քանի հոդվածները[19]:

1860-1870 թթ. թյուրքալեզու գրականության և թյուրքալեզու մամուլի ձևավորման նախաձեռնություններն իրենց շարունակությունն են ստացել նաև հաջորդ տասնամյակներում: Հասան-բեկ Զարդաբիի աշակերտներից Նաջաֆ-բեկ Վեզիրովը (1854-1926) թյուրքերենով գրել է մեկ տասնյակից ավելի պիեսներ՝ հիմնականում կատակերգական ժանրի: «Միսը քեզ, ոսկորը ինձ» կատակերգությունում հեղինակը ծաղրել է մահմեդական կրոնավորների բարքերն ու տգիտությունը, հանդես եկել արաբա-պարսկական լեզվի հիման վրա կրոնական կրթություն տվող հետամնաց դպրոցները ժամանակակից կրթական հաստատություններով փոխարինելու պահանջով: «Դժբախտի ողբերգությունը» դրամայում Վեզիրովը ներկայացրել է մահմեդական հասա-րակության մեջ կնոջ ողբալի վիճակը[20]: 1890 թ. նա թյուրքերենով գրել է իր «Նետված քարը կրունկին է դիպչում» և «Ուշացած զղջումը օգուտ չի տալիս» կատակերգությունները՝ ծաղրելով Այսրկովկասի մահմեդականների սնահա-վատությունն ու հետամնաց կենցաղը[21]: Նաջաֆ-բեկ Վեզիրովի ամենահայտնի երկը՝ «Ֆահրէդդինի վիշտը», թյուրքալեզու առաջին ողբերգությունն է (1896 թ.): Ստեղծագործության գլխավոր հերոսը ազատամիտ Ֆահրէդդինն է[22]:

---

[19] Расулзаде М. Э. *Сборник произведений и писем, М., 2010, с. 28.*

[20] *Азәрбајҹан әдәбијјаты тарихи, Нәҹәфбәј Вәзиров, Үч чилддә, II чилд, Бакы, 1960, с. 326;* Везиров Н. Б. *Избранные произведения, Баку, 1950, с. 9.*

[21] Vəzirov N. B. *Əsərləri, Bakı, 2005, s. 24-56.*

[22] Swietochowski T., *նշվ. աշխ., էջ 27:* Vəzirov N. B. *Əsərləri, Bakı, 2005, s. 4; История всемирной литературы в 9-и томах, т. 7, с. 219.*

«Էքինչի» թերթի փակվելուց հետո XIX դարում Այսրկովկասում թյուրքալեզու մամուլի հետագա պատմությունը կապված է Ունսիզադե եղբայրների գործունեության հետ: Հաջի Սե՜իդ (1839-1905) և Ջելալ Ունսիզադե (1854-1932) եղբայրները 1879-1891 թթ. Թիֆլիսում հրատարակել են «Զիյա» (Լույս) և «Քեշքյուլ» (Սուֆիի պնակ) թյուրքալեզու թերթերը: Նրանց պարագայում էլ Կովկասի ռուսական իշխանությունը թույլատրել է թերթերը տպագրել թյուրքերենով, սակայն խիստ գրաքննության պայմանով[23]*: Սուննի կրոնական գործիչ Սեյիդ Ունսիզադեի «Զիյա» (1880 թ. վերանվանված «Զիյա Քաֆքասիյե») թերթը աչքի էր ընկնում կրոնական և պահպանողական ուղղվածությամբ: Այնուամենայնիվ, այս տպագիր օրգանը ևս իր կարևոր դերն է ունեցել թյուրքալեզու գրավոր մշակույթի զարգացման գործում:*

Համեմատաբար ավելի ազատական էր 1883 թ. Ջելալ Ունսիզադեի հիմնած «Քեշքյուլ» թերթը: Ուշագրավ է, որ թերթի համար աշխատել են նաև հայ մեծանուն գրողներ Րաֆֆին և Ալեքսանդր Շիրվանզադեն[24]*: Թերթի տարբեր համարներում տպագրվել են Միր-զա Ֆաթալի Ախունդովի երկերը, Սեյիդ Ազիմ Շիրվանիի թյուրքերեն բանաստեղծությունները: Թյուրքերեն թարգմանությամբ ներկայացվում էին եվրոպական և հատկապես ռուսական գրականության նշանավոր ներկայացուցիչների գործերը: Թերթում լույս էին տեսնում նաև պարսկերեն և արաբերեն նյութեր*[25]*:*

«Քեշքյուլի» գոյության վերջին տարիներին՝ 1890-1891 թթ., թերթի էջերում լույս էին տեսնում թյուրքախոս էթնոլեզվական հանրույթի էթնիկ պատկանելության և ինքնագիտակցության վերաբերյալ հոդվածներ, որոնք ակնհայտորեն թուրքամետ էին և կրում էին ծնվող պանթյուրքիզմի գաղափարախոսության ազդեցությունը[26]*: Ի վերջո, Ունսիազադե եղբայրները ցարական իշխանության կողմից մեղադրվել են պանթյուրքիստական գաղափարներ քարոզելու մեջ և հեռացել են Օսմանյան կայսրություն*[27]*:*

---

[23] Şahverdiyev A. *Azərbaycan mətbuatı tarixi, Bakı, 2006, s. 46.*

[24] Зейналов А. А. *Проблема взаимоотношений азербайджанской литературы и печати с цензурой (1850-1905), Автореферат канд дисс., Баку, 1990, с. 41;* Şahverdiyev A., *նշվ. աշխ., էջ 52:*

[25] Аух Е. М., *նշվ. աշխ., http://old.sakharov-center.ru/publications/azrus/az003.htm*

[26] Swietochowski T., *նշվ. աշխ., էջ 32;* Shaffer B. *Borders and brethren: Iran and the challenge of Azerbaijani identity, Cambridge, 2002, p. 30;* Alstadt A. *The Azerbaijani Turks Power and Identity under Russian Rule, Stanford, 1992, p. 70;* Аух E-M., *նշվ. աշխ., http://old.sakharov-center.ru/publications/azrus/az_003.htm*

[27] Adel G. H., Elmi M. J., Taromi-Rad H. *Periodicals of the Muslim World, London, 2012, p. 16.*

Այսպիսով, XIX դարի երկրորդ կեսին Արևելյան Այսրկովկասում թյուրքալեզու գրականության և մամուլի տեսքով ձևավորվել էր գրավոր մշակույթ (որի հիմքի վրա մի քանի տասնամյակ անց՝ XX դարասկզբին, պիտի տեղի ունենար նոր՝ ադրբեջանցի ժողովրդի էթնոհամախմբման գործընթացը): Երկրամասի համար այս նոր երևույթն արդյունք էր նախ և առաջ ռուսական տիրապետության հաստատման և ցարական իշխանության վարած քաղաքականության: Ցարիզմը ցանկանում էր վերջնականապես կտրել Արևելյան XIX Այսրկովկասի մահմեդականների կապերը Իրանի հետ, ուստի խրախուսում էր թյուրքալեզու գրականության և մամուլի ձևավորումը: Իհարկե, միևնույն ժամանակ ռուսական իշխանությունը խստագույնս հետևում էր հատկապես թյուրքալեզու մամուլին, դրանում տեղ գտնող հրապարակումների քաղաքական և գաղափարական միտումներին՝ փորձելով կանխել կայսրության տարածքային ամբողջականության համար վտանգավոր ազգայնական և պանթյուրքիստական դրսևորումները: Այնուամենայնիվ, սեփական գրական լեզվի, գրականության և մամուլի ձևավորումը բնականաբար հանգեցնում էր մահմեդական թյուրքախոս բնակչության ինքնագիտակցության փոխակերպման, որը XIX դարի երկրորդ կեսին դրսևորվում էր առավելապես նոր ձևավորված թյուրքախոս մտավորականության շրջանում: Թյուրքալեզու գրավոր մշակույթի առաջ գալու գլխավոր հետևանքն այն էր, որ թյուրքախոս էթնո-լեզվական հանրույթի էլիտայի շրջանում նախորդ շրջանի իրանական ինքնագիտակցության փոխարեն աստիճանաբար ամրապնդվում էր թյուրքական ինքնընկալումը, որն արդեն ցուցադրում էր պանթյուրքիզմի հանգելու իրողությունը:

ФОРМИРОВАНИЕ ТЮРКОЯЗЫЧНОЙ ПИСЬМЕННОЙ КУЛЬТУРЫ В ВОСТОЧНОМ ЗАКАВКАЗЬЕ ВО ВТОРОЙ ПОЛОВИНЕ XIX В.

ГАЛСТЯН В. А.

Резюме

В начале XIX в. завоевав полунезависимые иранские ханства Восточного Закавказья, Российская империя стала проводить политику устранения персидского влияния, направленную в первую очередь на вытеснение персидского языка, который на протяжении столетий являлся официальным и литературным языком в этом регионе. Лучшим средством для достижения названной цели было создание тюркоязычной литературы. Во второй половине XIX в. Мирза Фатали Ахундов написал свои первые драмы на тюркском языке, заложив своими произведениями основу литературного тюркского языка (впоследствии–азербайджанско-го). Его начинание успешно продолжил Гасан-бек Зардаби, издававший газету “Экинчи” и ставший основателем тюркоязычной прессы. Вслед за “Экинчи” стали издаваться тюркские газеты “Зия” и “Кешкюль”, ставшие рупором формирующейся тюркоязычной интеллигенции.

THE FORMATION OF THE TURKIC LITERAL CULTURE IN EASTERN TRANSCAUCASIA IN THE SECOND HALF OF THE XIX CENTURY

V. GALSTYAN

Abstract

After the invasion of semi-independent Iranian khanates of the Eastern Transcaucasia the Russian Empire started politics of eliminating the Persian influence. First of all Russian authorities wanted to exclude Persian language, which was the formal and literal language in this region for many centuries. The newly emerging Turkic literature was a good tool for that goal. In the second half of the 19th century under the patronage of the Russian Empire Mirza Fathali Akhundov wrote his first dramas in Turkic language of Transcaucasia and with those founded the Turkic literal language. This movement was successfully continued by Hasan bey Zardabi who founded the Turkic press by printing the first Turkic newspaper Ekinchi. After short period under the influence of Turkic literature the Turkic speaking intellectual class was formed. After Ekinchi the other newspapers in Turkic language such as Ziya and Keshkul became the discussion and self-expression arena for Turkic speaking elite.